

Տեառն լինիցին: 71 Եւ ապա յայտնապէս կատարի¹ առ Նոսա բանն Տեառն², որ ասէ, թէ *Ուր եսն եմ՝ անդ եւ պաշտաւնեայն իմ եղիցի*^ա: 72 Եւ դու կնքեա՛ զտեսիլդ, որ ցուցաւ քեզ յայտնութիւն³ ի բարձանց. քանզի ոչ վրիպեսցի այտի բան մի⁴ մինչեւ կատարեսցի ամենայն:

73 «Եւ ես որպէս ի քնոյ⁵ զարթուցեալ ի տեսլենէն, զոր եցոյց ինձ Բարձրեալն որպէս արթնութեամբ⁶ յայտնապէս, եւ ի զարմացման մեծի եղեալ՝ փառաւորեցի զմարդասերն Աստուած, որ արժանի արար զանարժանութիւնս իմ այսպիսի ահաւոր տեսլեան⁷: 74 Եւ լռեալ ⁸դադարեցի յայտնել զայս⁹ ումեք մինչեւ ցայսաւր: 75 Եւ արդ պատմեցի ձեզ ոչ միայն առ Նեղել սրտիս, այլ եւ թաքուցանել երկուցեալ. զի մի երբեք¹⁰ իբրեւ զլացող¹¹ պատուհասեալ դատեցայց¹² ի ցուցողէ յայտնութեանս այսորիկ¹³. որ եւ գրով իսկ հրամայեաց ինձ¹⁴ զաւանդս զայս թողուլ աշխարհի»:

ԺԸ. Եւ լուեալ զայս ամենայն խաւսս բազմութեան աւագացն¹⁵ Հայոց, տանուտերացն եւ սեպիացն եւ միահամուռ ժողովրդոցն բազմութեան ի սուրբ հայրապետէն Սահակայ՝ յարտասուս հարեալ զարհուրեցան: 2 ¹⁶Եւ այնուհետեւ ոչ ոք ինչ իշխեր յաղագս այսպիսի բանից ասել ինչ ընդ սրբոյն եւ կամ ճառել:

3 Եւ յայնմիտեւ ամփոփեալ զինքն առաքիւնոյն¹⁷ յամենայն աշխարհածուփ զբաւսանաց՝ աղաւթից միայն պարապեր եւ վարդապետութեան. վասն զի բազումք յեպիսկոպոսաց եւ յայլոց պատուական¹⁸ քահանայից ոչ

1 *Ձ. չիք* կատարի

2 *ԲԳտ.* բանն տերունեան բարբառոյն

ա Յովհ. ԺԲ 26

3 *ԲԳտ.* ցուցաւ քեզ թուով յայտնութիւն

4 *ՁԱտ.* չիք մի

5 *ԲԳտ.* իբրեւ ի քնոյ

6 *ՁԱտ.* որպէս եւ արթնութեամբ

7 *ԲԳտ.* այսպիսի մեծ եւ ահաւոր տեսչութեան

8 *ԲԳտ.* դադարեցի ի յայտնելոյ... մինչեւ ցայսօր ժամանակի

9 *ՁԱտ.* զայս յայտնել

10 *ԲԳտ.* չիք երբեք

11 *Ձ.* մի՛ երբեք զլացող

12 *Ձ.* դադարեցայց

13 *ՁԱտ.* չիք այսորիկ

14 *ՁԱտ.* հրամայեցաւ ինձ

15 *ԲԳտ.* աւագանւոյն

16 *ՁԱտ. ունին՝* Եւ այնուհետեւ ոչ ոք (*Ձ. չիք* ոք) իշխեր ինչ յաղագս այսպիսի բանից խօսել ընդ նմա: *Ապա վերնագիր՝* Մահն սահակայ եւ մերորբայ: *Ապա կրկնութեամբ՝* Եւ այնուհետեւ ոչ ոք ինչ իշխեր յաղագս այսպիսի բանից *եւն*:

17 *ՁԱտ.* առաքիւնոյն

18 *ԲԳտ.* ի պատուական